

Բացատրագիր

Երևան քաղաքի Եղվարդի խճուղու (Տ. Պետրոսյան փ. - Եղվարդի խճ. Օղակաձև խաչմերուկից մինչև Եղվարդի խճ. - Հալաբյան փ. տրանսպորտային հանգույց) միջին նորոգման աշխատանքների նախագիծը կազմված է համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված առաջադրանքի և ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/20 պայմանագրի, կնքված <<Արցախճան>> ինստիտուտի ՓԲԸ-ի հետ:

Հետախուզական աշխատանքները կատարվել են 2026թ. մարտ ամսին՝ <<Արցախճան>> ինստիտուտի ՓԲԸ-ի կողմից:

Հետախուզական աշխատանքների ժամանակ օգտագործված գործիքների անվանումը

Trimble R8s մոդելի GPS սարքի և Leica ViVa TS11 մոդելի տախեոմետրիական սարք ,ճշտությունը 0,5 մմ: Չափագրումը կատարվել է ARM-WAG կորդինատային համակարգով բարձրությունը՝ Բալթյան համակարգ:Համակարգը էլեկտրոնային է :

Տեղագեոդեզիական հետազննումն իրականացվել է ԳՕՍՍ 32869-2014-ի և ստանդարտներով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվային փաստաթղթերի համաձայն:

Նախագծային լուծումներ

Միջին նորոգման աշխատանքներում նախատեսվել է իրականացնել հետևյալ աշխատանքները

- Ճանապարհային պատվածքի մաշված շերտի ֆրեզում $h=5$ սմ, տեղափոխում պատվիրատուի կողմից նշված վայր՝ Երևան քաղաքի տարածքում, 13կմ հեռավորության վրա:
- Ֆրեզված ճանապարհածածկի փոսային նորոգում $h=5$ սմ մանրահատիկ ա/բետոնով
- Փոսային նորոգում հիմքով՝ չափազանցված խիճ $h=12$ սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ² և տաք ծակտրեկներ խոշորահատիկ ա/բետոն $h=6$ սմ
- Հարթեցնող շերտի իրականացում $h_{տիջ}=3$ սմ
- Տաք մանրահատիկ ա/բետոնի իրականացում $h=5$ սմ

Նախատեսվել է նաև հատող փողոցների նորոգում նույն կառուցվածքով:

Մուտքերում նախատեսվել է մաշված ա/բ շերտի ֆրեզում և միաշերտ մանրահատիկ ա/բետոնի իրականացում:

Նախատեսվել է դիտահորորի և անձրևընդունիչների նորոգում, լողացող դիտահորեր և ե/բ սալեր թուջե կափարիչով և ցանցով:

Ե/բ սալը , թուջե օղակը և կափարիչը նախատեսվել են ԳՕՍՍ 3634-99-ի պահանջներին համապատասխան:

Նախագծային փաստաթղթերը կազմվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025թ. ապրիլի 1-ի N08-ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան:

Ներկայացված են ամփոփագրեր յուրաքանչյուր ներկայացված աշխատանքների համար:

Կազմեց

Ա. Սարգսյան